

ԼՂՀ-ՈՒՄ ԹՈՒՐՄԻ ՁԵՎՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՈՒՅՄԵՐՆ

Մ.Ս. Ծատրյան

Որքան հին է պատմությունը, նույնքան հին է բույսերի կիրառման պատմությունը և՛ որպես սնունդ, և՛ որպես դեղամիջոց, և՛ որպես թուրմ՝ հաճելի բուրմունքի և համի համար: Այժմ էլ օգտագործվում են բազմապիսի բույսերի թուրմեր, ոչ միայն բուժական նպատակով, այլև հաճելի բուրմունքի և համի համար:

Մեր կողմից կատարած հետազոտությունների ժամանակ ուսումնասիրել ենք ԼՂՀ-ում թուրմի ձևով օգտագործվող 22 բույս, տվել դրանց ընտանիքային պատկանելիությունը:

Թուրմի ձևով օգտագործվող բույսերը հիմնականում պատկանում են *Labiatae* – Շրթնաձաղկավորներ / ուրգ, պատրինջ, խնկաձաղիկ, անանուխ, եղնապակ, Փշատազգիներ – *Elaeagnaceae* Lind L. / չիչխան/, վարդազգիներ – *Rosaceae* / վարդ, մոշենի, մասրենի, սերկևիլենի, սզնի/, Հոնազգիներ – *Cornaceae* Link / հոն/, Լորենազգիներ – *Tiliaceae* / Լորենի մանրատերև/, Ընդավորներ – *Leguminosae* - /Երեքնուկ մարգագետնային/, Բարդաձաղկավորներ – *Compositae* /Երիցուկ բժշկական, Եղերդակ/, Նոնազգիներ – *Punicaceae* /Նոնենի/ ընտանիքներին:

Թուրմի ձևով օգտագործվող բույսերը օգտագործվում են ամբողջ տարվա ընթացքում, քանի որ այն հնարավոր է օգտագործել ինչպես թարմ, այնպես էլ չորացրած վիճակում: Միայն սրոհունդը /*Hipericum perforatum* L./ և երիցուկը /*Matricaria chamomilla* L./ թարմ վիճակում չեն օգտագործում՝ սուր հոտի և համի պատճառով: Այս բույսերը օգտագործում են չոր վիճակում: Թուրմի մեջ օգտագործում են բույսի որոշ մասեր, օրինակ, որոշ բույսերի վերգետնյա մասերն են օգտագործում /ուրգ, խնկաձաղիկ /, իսկ որոշներինը՝ ցողունը տերևներով / անանուխ, մորի, բալենի./, կան բույսեր, որոնց ծաղիկներն են միայն օգտագործվում թուրմի ձևով /երեքնուկ մարգագետնային, երիցուկ, եղերդակ/, իսկ որոշներինը՝ պտուղները / զկեռենի, սզնի, հոնի, չիչխան, ծորենի, մասրենի/ և այլն:

Բույսերի անվանումների, օգտագործվող մասերի, ձևերի մասին տվյալները տրված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Բույսի անվանումը	Օգտագործվող մասը	Օգտագործման ձևը	Թուրմի գույնը
Ուրգ սողազող	վերգետնյա մասը	Թարմ և չոր	Բաց կանաչավուն
Պատրինջ դեղատու	Ցողունը տերևներով	Թարմ և չոր	Կանաչավուն
Խնկաձաղիկ սովորական	վերգետնյա մասը	Չոր	Բաց վարդագույն
Անանուխ	Ցողունը տերևներով	Թարմ և չոր	Մուգ կանաչավուն
Եղնապակ բժշկական	Ցողունը տերևներով	Թարմ և չոր	Դեղնա կանաչավուն
Հոնի սովորական	Տերևները	Թարմ և չոր	Դեղնավուն
Մասրենի	Պտուղը, ծաղիկը	Թարմ և չոր	վարդագույն
Սերկևիլենի սովորական	Պտուղը, տերևները	Թարմ և չոր	Բաց վարդագույն
Սզնի	Պտուղը ճյուղերով, ծաղիկը	Թարմ և չոր	Բաց մանուշակագույն
վարդ	Ծաղիկները	Թարմ և չոր	Բաց վարդագույն
Մոշենի	Տերևները ճյուղերով, ծաղիկները	Թարմ և չոր	Բաց կանաչավուն
Մորի անտառային	Ցողունը տերևներով	Թարմ	Բաց կանաչավուն
Բալենի	Տերևները ճյուղերով,	Թարմ	Բաց վարդագույն
Զկեռենի սովորական	Պտուղը	Թարմ	Դեղնավուն
Ծորենի սովորական	Պտուղը, տերևները	Թարմ և չոր	Բաց կարմրավուն
Լորենի մանրատերև	Տերևները	Թարմ և չոր	Ալ կարմիր
Երիցուկ բժշկական	Ծաղիկները	Թարմ և չոր	Դեղնավուն
Եղերդակ սովորական	Ծաղիկները	Թարմ և չոր	Բաց դեղնավուն
Երեքնուկ մարգագետնային	Ծաղիկները	Չոր	Բաց դեղնավուն
Նոնենի	Պտուղի կեղևը	Թարմ և չոր	Դեղնավուն
Չիչխան սովորական	Պտուղը	Թարմ	Նարնջագույն
Սրոհունդ խոզված	վերգետնյա մասը	Չոր	Կարմիր

Ուսումնասիրվող 22 բույսերից երկուսը /Երեքնուկ մարգագետնային, Երիցուկ բժշկական/ միամյա են, մնացածը՝ բազմամյա: Նշված բույսերից մեծ մասը՝ 10 խոտաբույսեր են, 9-ը՝ թփեր, 3-ը՝ ծառեր և, ամենակարևորը, հիմնականում դեղաբույսեր են:

Համառոտ տվյալներ դեղաբույսերի մասին

Աղյուսակ 2

Բույսի անվանումը	Նյանքի ձևը	Կենսաձևը	Հանդիպվող վայրերը
Ուրց սողացող	Բազմամյա	Խոտաբույս	Ժայռերի թերթաթերթիկների վրա, չոր սոճուտներում, տափաստաններում
Պատրինջ դեղատու	Բազմամյա	Խոտաբույս	Չոր, քարքարոտ վայրերում, անտառի բացատներում
Խնկածաղիկ սովորական	Բազմամյա	Խոտաբույս	Բացատներում, թփուտներում, մարգագետիններում
Անանուխ	Բազմամյա	Խոտաբույս	Նախալեռն. միջին և բարձրլեռն. գոտիների խոնավ և ջրովի հողերում
Եղնապակ բժշկական	Բազմամյա	Խոտաբույս	Հանապարհների եզրերին, մարգագետիններում
Հոնի սովորական	Բազմամյա	Ծառանման թուփ	Անտառներում, այգիներում
Մասրենի	Բազմամյա	Թուփ	Լեռնալանջերին, անտառաեզրերին, թփուտներում, բաց տարածքներում
Սերկևիլենի սովորական	Բազմամյա	Ծառ կամ թուփ	Անտառներում, այգիներում
Սզնի	Բազմամյա	Փշոտ ծառ կամ թուփ	Նոսր անտառներում, չոր քարքարոտ թերթաթերթիկներում
Վարդ	Բազմամյա	Թուփ	Անտառեզրերին, լեռնալանջերին, քարքարոտ վայրերում
Մոշենի	Բազմամյա	Թուփ	Խոնավ ողողվող մարգագետիններում, թփուտներում, առվակների ու գետերի ափերին
Մորի անտառային	Բազմամյա	Խոտաբույս	Նոսր անտառներում, թփուտներում, մարգագետիններում
Բալենի	Բազմամյա	Ծառ	Ստորին և միջին լեռն. գոտիներում, չոր քարքարոտ լանջերին, թփուտներում
Զկեռենի սովորական	Բազմամյա	Ծառանման թուփ	Լուսավոր կաղնու-բոխու անտառներում, անտառեզրերին, թփուտներում
Ծորենի սովորական	Բազմամյա	Թուփ	Չոր լանջերի թփուտային մացառուտներում, գետահովիտներում
Լորենի մանրատերև	Բազմամյա	Ծառ	Անտառներում
Երիցուկ բժշկական	Միամյա	Խոտաբույս	Ցածրադիր շրջաններում, հացաբույսերի և խոտաբույսերի ցանքադաշտերում, գնլադաշտերում
Եղերդակ սովորական	Բազմամյա	Խոտաբույս	Չոր մարգագետիններում, ճանապարհների և դաշտերի եզրերին
Երեքնուկ մարգագետնային	Միամյա	Խոտաբույս	Անտառների բացատներում
Նռնենի	Բազմամյա	Ծառանման թուփ	Գետափերին, կիրճերում, նախալեռներում, նոսր անտառներում
Չիչխան սովորական	Բազմամյա	Ծառանման թուփ	Գետերի և առուների հովիտներում, ճահճուտներում, խոնավ վայրերում
Սրոհունդ խոցված	Բազմամյա	Խոտաբույս	Անտառային բացատներում, թփուտներում, այգիներում, չոր մարգագետիններում

Բնակչության կողմից թուրմի ձևով օգտագործվող բույսերը իրենց մեջ պարունակում են մեծ քանակությամբ ակտիվ, օգտակար նյութեր՝ վիտամիններ, գլիկոզիդներ, ածխաջրեր, կարոտին, ալկալոիդներ, ֆիտոնիցիդներ եթերայուղեր, յորձ և այլն, որը հնարավորություն է տալիս նրանց օգտագործել նաև որպես դեղաբույսեր, մի շարք հիվանդություններ բուժելու համար, ինչպիսիքն են ատամի ցավը, թուրթրը, բրոնխիտը, հազը, խոցը, աթերոսկլերոզը, արյունահոսությունը, նյութափոխանակության խանգարումը և այլն:

Ուսումնասիրված 22 բույսերի նկարների հերթականությունը համապատասխանում է աղյուսակներում տրված հերթականությանը:



1



2



3



4



5



6



7



8



9



10



11



12



13



14



15



16



17



18



19



20



21



22

Գրականություն

1. Ղազարյան Ռ.Ս. Բուսականության հայերեն-լատիներեն բառարան, Երևան, 1981:
2. В.С. Новиков, И.А. Губанов, Атлас определитель дикорастущие растения, М., 2008.
3. В.А. Петров, Этноботаника Нагорного Карабаха, Баку, 1940.
4. Тахтаджян А.Л., Флора Армении, Ереван, 1980.

Резюме

В данной статье нами представлены 22 вида растений, используемых в Нагорном Карабахе при приготовлении настоек. Была выяснена их принадлежность к соответствующим семействам, а также дана информация об используемых частях растений и форме их потребления.